ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

**ՈՐՈՇՈՒՄ N 108-Ա**

**«18» ԱՊՐԻԼ 2022Թ.**

**ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 215-րդ հոդվածի 2-րդ մասով, 220-րդ և 222-րդ հոդվածներով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի թիվ 1392-Ն որոշմամբ հաստատված թիվ 3 հավելվածի 30-րդ կետով և 31-րդ կետի 1-ին ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2021 թվականի օգոստոսի 9-ի թիվ 115-Ա որոշմամբ աուդիտի առաջադրանքի իրականացման նպատակով ստեղծված աշխատանքային խմբի կողմից «Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում իրականացված աուդիտի վերջնական հաշվետվությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. 2021 թվականի դեկտեմբերի 3-ից 20-ն ընկած ժամանակահատվածում աուդիտորական առաջադրանքի իրականացման նպատակով ստեղծված աշխատանքային խմբի կողմից «Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում իրականացված համապատասխանության և ներքին հսկողության

համակարգի գնահատման աուդիտի արդյունքում հայտնաբերված թերությունների և անհամապատասխանությունների պատճառները և հետևանքները քննելու նպատակով հարուցել կարգապահական վարույթ:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

4/18/2022

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

**Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

**ք. Եղեգնաձոր**